ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-Ի N 1419-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ 2020 թ. N_____ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-Ի N 1419-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության մասին 34-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 57-րդ կետի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի **«Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և**

կատարված աշխատանքների ընդունման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1942-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1419-Ն որոշման (այսուհետև՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) Որոշման 1-ին կետով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և կատարված աշխատանքների ընդունման կարգի (այսուհետև՝ Կարգ) 20-րդ կետում «կողմից» բառից հետո լրացնել «՝ համաձայն սույն որոշման 3-րդ աղյուսակ պահանջների։» բառերը։

2) Կարգի 28-րդ կետի «Ավտոմոբիլային ճանապարհների պահպանման ցուցանիշներին առաջադրվող պահանջները» 3-րդ աղյուսակի «Ընթացիկ ամառային պահպանում» բաժնի՝

ա. 26-րդ կետի 2-րդ սյունյակում «վնասված» բառից հետո լրացնել «, բացակայող» բառը, իսկ «3 օր է, 2.1-2.7 առավելության նշանների դեպքում՝ 1 օր։» բառերը փոխարինել «5 օր է, 2.1-2.7 առավելության նշանների դեպքում՝ 3 օր» բառերով։

բ. 27-րդ կետը ուժը կորցրած ճանաչել։

գ. 30-րդ կետում «, կախված» բառը հանել։

դ. 31-րդ կետում «պարսպող հարմարանքների և» բառերը հանել։

ե. 34-րդ կետում «կայանատեղերում» բառից հետո «տեսահարթակներում» բառը հանել։

3) Կարգի 28-րդ կետի «Ավտոմոբիլային ճանապարհների պահպանման ցուցանիշներին առաջադրվող պահանջները» 3-րդ աղյուսակի «Ընթացիկ ձմեռային պահպանում» բաժնի՝

ա. 13-րդ կետի 2-րդ սյունակը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Թեքված, ծռված, վնասված, բացակայող ճանապարհային նշաններ, բացակայող ցուցանակներ (կապալառուին հանձնված ընդհանուր թվի տոկոսը):
Թերության վերացման ժամկետը 5 օր է, 2.1-2.7 առավելության նշանների դեպքում՝ 3 օր»:

բ.14-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

4) Կարգի 28-րդ կետի «Ավտոմոբիլային ճանապարհների պահպանման ցուցանիշներին առաջադրվող պահանջները» 3-րդ աղյուսակի «Ընթացիկ ամառային պահպանում» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 39-45-րդ կետերով.

«

Մետաղական արգելափակոցներ

39	Ամրացման սյուների թեքվածություն, ծռվածություն, բացակայություն՝ սպասարկվող յուրաքանչյուր ճանապարհահատվածի ընդհանուր երկարության տոկոսը	միջպետական հանրապետական տեղական	3 4 5	4 5 5
	վերացման ժամկետը 3 օր է:			
40	Ամրացման հանգույցների հեղյուս- մանեկ միացման բացակայություն, ոչ բավարար ձգվածություն, եռակցման կարերի անընդհատության խախտում՝ սպասարկվող յուրաքանչյուր ճանապարհահատվածի ընդհանուր երկարության տոկոսը	միջպետական հանրապետական տեղական	3 4 5	4 5 6
	վերացման ժամկետը 3 օր է:			
41	Մետաղական հորիզոնական թիթեղների բացակայություն, ծռվածություն կոտրվածք՝ սպասարկվող յուրաքանչյուր ճանապարհահատվածի ընդհանուր	միջպետական հանրապետական տեղական	3 4	4 5

	երկարության տոկոսը		5	5
	վերացման ժամկետը 4 օր է:			
42	Լուսային անդրադարձիչների բացակայություն, վնասվածք, խամրում՝ սպասարկվող յուրաքանչյուր ճանապարհահատվածի ընդհանուր երկարության տոկոսը	միջպետական հանրապետական տեղական	3 3 4	4 4 5
	վերացման ժամկետը 5 օր է:			
43	Մակերևույթների ոչ ամբողջական ներկված լինելը կամ դրա ոչ բավարար ընթեռնելիությունը՝ սպասարկվող յուրաքանչյուր ճանապարհահատվածի ընդհանուր երկարության տոկոսը	միջպետական հանրապետական տեղական	10 15 15	1 1 1
	վերացման ժամկետը 5 օր է:			
44	Եզրային թիթեղի բացակայություն կամ վնասվածք՝ սպասարկվող յուրաքանչյուր ճանապարհահատվածի ընդհանուր քանակի տոկոսը վերացման ժամկետը 3 օր է:	միջպետական հանրապետական տեղական	3 4 5	4 5 5
45	Պարսպող հարմարանքների բարձրության անհամապատասխանությունը նորմերին՝ սպասարկվող յուրաքանչյուր ճանապարհահատվածի ընդհանուր երկարության տոկոսը	միջպետական հանրապետական տեղական	4 5 5	5 5 5
	վերացման ժամկետը 5 օր է:			

»

5) Կարգի 28-րդ կետի «Ավտոմոբիլային ճանապարհների պահպանման ցուցանիշներին առաջադրվող պահանջները» 3-րդ աղյուսակի «Ընթացիկ ձմեռային պահպանում» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 22-28-րդ կետերով.

«

Մետաղական արգելափակոցներ

22	Ամրացման սյուների թեքվածություն, ծռվածություն, բացակայություն՝ սպասարկվող յուրաքանչյուր ճանապարհահատվածի ընդհանուր երկարության տոկոսը	միջպետական հանրապետական տեղական	3 4 5	4 5 5
	վերացման ժամկետը 3 օր է:			
23	Ամրացման հանգույցների հեղյուս- մանեկ միացման բացակայություն, ոչ բավարար ձգվածություն, եռակցման կարերի անընդհատության խախտում՝ սպասարկվող յուրաքանչյուր ճանապարհահատվածի ընդհանուր երկարության տոկոսը	միջպետական հանրապետական տեղական	3 4 5	4 5 6
	վերացման ժամկետը 3 օր է:			
24	Մետաղական հորիզոնական թիթեղների բացակայություն, ծռվածություն կոտրվածք՝ սպասարկվող յուրաքանչյուր ճանապարհահատվածի ընդհանուր երկարության տոկոսը	միջպետական հանրապետական տեղական	3 4 5	4 5 5
	վերացման ժամկետը 4 օր է:			
25	Լուսային անդրադարձիչների բացակայություն, վնասվածք, խամրում՝ սպասարկվող յուրաքանչյուր ճանապարհահատվածի ընդհանուր երկարության տոկոսը	միջպետական հանրապետական տեղական	3 3 4	4 4 5
	վերացման ժամկետը 5 օր է:			
26	Մակերևույթների ոչ ամբողջական ներկված լինելը կամ դրա ոչ բավարար ընթեռնելիությունը՝ սպասարկվող յուրաքանչյուր ճանապարհահատվածի ընդհանուր երկարության տոկոսը	միջպետական հանրապետական տեղական	10 15 15	1 1 1
	վերացման ժամկետը 5 օր է:			
27	Եզրային թիթեղի բացակայություն կամ վնասվածք՝ սպասարկվող յուրաքանչյուր ճանապարհահատվածի ընդհանուր քանակի տոկոսը	միջպետական հանրապետական տեղական	3 4	4 5

			5	5
	վերացման ժամկետը 3 օր է:			
28	Պարսպող հարմարանքների բարձրության անհամապատասխանությունը նորմերին՝ սպասարկվող յուրաքանչյուր ճանապարհահատվածի ընդհանուր երկարության տոկոսը	միջպետական հանրապետական տեղական	4 5 5	5 5 5
	վերացման ժամկետը 5 օր է:			

»

6) Կարգի 35-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«35. Թերությունների վերացման ժամկետները տրվում են պահպանման աշխատանքների կատարման ընթացիկ հսկողության և թերությունների վերացման ժամկետները գնահատելու համար:»:

7) Կարգի 43-րդ կետի Ձև 3-ի և 4-ի աղյուսակը վերջին տողից հետո լրացնել հետևյալ տողերով՝

է. Մետաղական արգելափակոցներ
1
2

8) Կարգի 47-րդ կետում «համար» բառից հետո լրացնել «, իսկ մետաղական արգելափակոցների համար տվյալ տարածաշրջանով անցնող ճանապարհահատվածի ընդհանուր գծամետրի գումարի չափով,» բառերը:

9) Կարգի 47-րդ կետի «Ավտոմոբիլային ճանապարհների պահպանման թույլատրելի ցուցանիշները չապահովելու դեպքում կիրառվող նվազեցման տոկոսաչափեր» 4-րդ աղյուսակի «Ընթացիկ ամառային պահպանում» վերտառությամբ 1-ին կետի՝

ա. «Երթևեկելի մաս» վերտառությամբ 2-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ. «

2. Երթևեկելի մաս
ա. Երթևեկելի մաս և մայթեր (ասֆալտապատ և սև կոպճային ծածկով), այդ թվում՝
2.1 և 2.4 Փոսայնությանն առաջադրվող պահանջների
2.2 Ճաքայնությանն առաջադրվող պահանջների
2.3 Մայթերին առաջադրվող պահանջների
բ. Երթևեկելի մաս (կոպճային ծածկով), այդ թվում՝
2.3 Կոպճային ծածկին առաջադրվող պահանջների

»

բ. «Կահավորանք, այդ թվում՝» վերտառությամբ 4-րդ ենթակետի 2-րդ պարբերությունում «Արգելափակոցներին» բառը փոխարինել «Պարապետներին, անվահրիչներին» բառերով։

գ. «Ինժեներական շինություն» վերտառությամբ 5-րդ ենթակետի 2-րդ պարբերությունում «կայանատեղերում» բառից հետո «տեսահարթակներում,» բառը հանել։

10) Կարգի 47-րդ կետի «Ավտոմոբիլային ճանապարհների պահպանման թույլատրելի ցուցանիշները չապահովելու դեպքում կիրառվող նվազեցման տոկոսաչափեր» 4-րդ աղյուսակի «Առանձին պահպանման հանձնվող թունելի պահպանում» վերտառությամբ 3-րդ և «Առանձին պահպանման հանձնվող կամուրջների պահպանում» վերտառությամբ 4-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած։

11) Կարգի 47-րդ կետի «Ավտոմոբիլային ճանապարհների պահպանման թույլատրելի ցուցանիշները չապահովելու դեպքում կիրառվող նվազեցման տոկոսաչափեր» 4-րդ աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակության 6-րդ կետով.

«6) Մետաղական արգելափակոցների պահպանում

Մետաղական արգելափակոցների կոնստրուկտիվ տարրերի թերություններ	Թերությու ժամկետու դեպքում ս հարմարա պահպանմ պակասեց

1	Ամրացման սյուների թեքվածություն, ծռվածություն, բացակայություն՝ մետաղական արգելափակոցի անընդհատ հատվածի ընդհանուր երկարության առաջադրվող պահանջներ՝ ըստ աղյուսակ 3-ի	15
2	Ամրացման հանգույցների հեղյուս-մանեկ միացման բացակայություն, ոչ բավարար ձգվածություն, եռակցման կարերի անընդհատության խախտում ընդհանուր երկարության առաջադրվող պահանջներ՝ ըստ աղյուսակ 3-ի	15
3	Մետաղական հորիզոնական թիթեղների բացակայություն, ծռվածություն կոտրվածք, միացման հատվածներում եռակցման կարերի ընդհատվածություն ընդհանուր երկարության առաջադրվող պահանջներ՝ ըստ աղյուսակ 3-ի	20
4	Լուսային անդրադարձիչների բացակայություն, վնասվածք, խամրում՝ մետաղական արգելափակոցի ընդհանուր երկարության առաջադրվող պահանջներ՝ ըստ աղյուսակ 3-ի	10
5	Մակերևույթների ոչ ամբողջական ներկված լինելը կամ դրա ոչ բավարար ընթեռնելիությունը ընդհանուր երկարության առաջադրվող պահանջներ՝ ըստ աղյուսակ 3-ի	15
6	Եզրային թիթեղի բացակայություն կամ վնասվածք ընդհանուր երկարության առաջադրվող պահանջներ՝ ըստ աղյուսակ 3-ի	15
7	Պարսպող հարմարանքների բարձրության անհամապատասխանությունը նորմերին՝ ընդհանուր երկարության առաջադրվող պահանջներ՝ ըստ աղյուսակ 3-ի	10

[1] *Պահպանման միջանկյալ դիտարկումների ժամանակ չափումներն իրականացվում են մի ամրացման սյունից մյուս ամրացման սյուն, և հորիզոնական թիթեղի առավելագույն ճկվածքի չափը բաժանվում է սյուների միջև ընկած հեռավորության վրա: Թերությունը վերացնելուց հետո հորիզոնական թիթեղի ճկվածքի չափը պետք է համապատասխանի ԳՈՍՏ 26804-86-ում բերված պահանջին (3 մմ 1 գծմ.վրա):»:*

12) Կարգի 51-րդ կետում ներառված ՁԵ N11-ի աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ.

«ՁԵ N11

Տեխնիկական կարգը	Առկա վիճակը	Սպասարկման մակարդակը	Հատվածների ընդհանուր երկարությունը (կմ)	Միավորի արժեքը համապատասխանաբար համաձայն 6.1, 6.2 և 6.3 Ձևերի (ՀՀ դրամ)	Ընդ (ՀՀ
1	2	3	4	5	6

ա) Ընթացիկ ամառային պահպանում

ա/ Ընդամենը ընթացիկ ամառային պահպանում

բ) Ընթացիկ ձմեռային պահպանում

բ) Ընդամենը ձմեռային պահպանում

գ) Ընթացիկ մետաղական արգելափակոցների պահպանում

	Ընդհանուր երկարությունը (գծ.մ)	Միավորի արժեքը (ՀՀ դրամ)	Ընդ «2» × (ՀՀ դ
Տարածաշրջանի անվանումը			
1	2	3	4
գ) Ընդամենը մետաղական արգելափակոցների պահպանում			
ԱՄԲՈՂՋԸ (ա+բ+գ)			
ԱՄԲՈՂՋԸ տառերով			

_____դ

13) Կարգի 53-րդ կետի աղյուսակի 1-ին, 2-րդ, 3-րդ և 7-րդ կետերում «GPS համակարգով» բառերը փոխարինել «գլոբալ տեղորոշման համակարգով (GPS/GLONASS)» բառերով:

14) Կարգը լրացնել հետևյալ բովանդակության 53.1-րդ կետով՝

«53.1 Կապալառուն սույն որոշման 53-րդ կետում նշված մեքենասարքավորումներում տեղադրված գլոբալ տեղորոշման համակարգով ստացվող տվյալները ծրագրային մակարդակով փոխանցում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Երթուղային ցանցի մոդելավորման և ճանապարհային ցանցի ակտիվների կառավարման և սպասարկման աշխատանքների

պլանավորման և վերահսկման» համակարգին՝ կապալի պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխան։»։

15) Կարգի 56-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ ենթակետով՝

«5.***նստվածքներ*** - որոնք անհնարին կամ առավելագույնս վտանգավոր կդարձնեն ճանապարհահատվածի տվյալ հատվածով անվտանգ երթևեկությունը։»։

2. Թույլատրել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը՝

սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ գործող Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող, առանձին պահպանվող մետաղական արգելափակոցների պահպանման աշխատանքների կատարման կապալի պայմանագրերի (այսուհետև՝ Պայմանագիր) գործողության ժամկետը լրանալուց հետո լրացումներ կատարել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ գործող Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման կապալի պայմանագրերում՝ այնտեղ ներառելով համապատասխան տարածաշրջանի ավտոմոբիլային ճանապարհների վրա առկա մետաղական արգելափակոցների պահպանման աշխատանքները՝ հիմք ընդունելով համապատասխան Պայմանագրերով նախատեսված 1 գծմ մետաղական արգելափակոցի պահպանման աշխատանքների համար սահմանված արժեքները։